

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ  
ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնակարգը կարգավորում է ուսանողների գիտելիքների անընդհատ ստուգման, ընթացիկ և կիսամյակային քննությունների ամբողջ առարկայից կամ դրա առանձին բաժիններից և տվյալ ժամանակահատվածում ուսանողի կատարած աշխատանքի գնահատման, ստեղծագործական մտածողության զարգացման, ինքնուրույն, սիստեմատիկ աշխատանքի հմտությունների ձեռքբերման, գործնական խնդիրների լուծման մեջ ստացած գիտելիքների կիրառման կարողության գործընթացը:

2. Ուսանողի գիտելիքների անընդհատ ստուգումը իրականացվում է առավելապես լաբորատոր, գործնական և սեմինար պարապմունքներին, որի կազմակերպումը պարտադիր է և որը նպաստում է ուսանողների գիտելիքների անընդհատ կուտակման և կիսամյակի ընթացքում սիստեմատիկ աշխատանքներին, ինքնուրույն աշխատանքի զարգացման և ուսանող-դասախոս արտաժամյա (արտալսարանային) ուսուցման գործընթացին:

3. Ստուգարքները, որպես կանոն, ծառայում են ուսանողների կողմից կատարվող լաբորատոր, հաշվարկա-գրաֆիկական աշխատանքները, կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարումը և պաշտպանությունը, գործնական ու սեմինար պարապմունքների նյութերի յուրացման ստուգման ձև:

Ստուգարքները կարող են սահմանվել ինչպես առանձին առարկայից, այնպես էլ նրանց առանձին բաժիններից:

4. Ուսանողները պարտավոր են բոլոր ստուգարքները և քննությունները հանձնել հաստատված ուսումնական պլաններին և գրաֆիկներին համապատասխան: Ուսանողները կարող են ստուգարքներ և քննություններ հանձնել նաև կամընտրային առարկաներից, որոնց արդյունքները ուսանողների ցանկությամբ կարող են գրանցվել քննական տեղեկագրերի, ստուգման գրքույկի, ակադեմիական տեղեկանքի և դիպլոմի ներդրի մեջ:

5. Ուսանողների գիտելիքների ստուգումները անց են կացվում կիսամյակի ընթացքում առարկայի առանձին մասերից, բաժիններից կամ թեմաներից անընդհատ ստուգումների, ընթացիկ և կիսամյակային քննությունների ձևով:

Կիսամյակում ընթացիկ (միջանկյալ) քննությունների քանակը սահմանվում է առարկայի տվյալ կիսամյակի դասախոսությունների ժամաձավալով.

ա. շաբաթական I ժամ դասախոսություն ունեցող առարկայի (ների) համար կիսամյակում սահմանվում է մեկ ընթացիկ (միջանկյալ) քննություն

բ. շաբաթական 2-3 ժամ դասախոսություն ունեցող առարկայի (ների) համար՝ երկու ընթացիկ քննություն

գ. շաբաթական 4 և ավելի ժամ դասախոսություն ունեցող առարկայի (ների) համար՝ երեք ընթացիկ քննություն:

Ուսանողի մասնակցությունը ընթացիկ քննություններին և հանձնումը պարտադիր է:

Բոլոր այն կուրսերում, որտեղ գործում է ուսանողների նպաստների նշանակման շրջափոխման (ռոտացիոն) համակարգը, տվյալ առարկայի նշված կիսամյակի վերջին ընթացիկ քննությունը կազմակերպվում է սեսիոն (կիսամյակային) քննության ժամանակ, սահմանված գրաֆիկով:

6. Ընթացիկ քննությունների հանձնման և վերահանձնման ժամկետները և ձևերը (գրավոր կամ բանավոր) ըստ քննական առարկաների սահմանվում են ամբիոնի կողմից և համակարգվում է ֆակուլտետի դեկանատում: Ընթացիկ քննությունները, հարցաշարը, անցկացման ժամանակացույցը և կանոնները ամբիոնը ուսանողին տրամադրում է տվյալ կիսամյակի առաջին ամսվա ընթացքում: Ընթացիկ քննությունների հանձնման համար սահմանվում է երկշաբաթյա ժամկետ, իսկ վերահանձնումը (այդ թվում նաև դրական գնահատականը բարձրացնելու նպատակով) թույլատրվում է մինչև հաջորդ ընթացիկ կամ տվյալ առարկայի կիսամյակային քննությունը:

7. Ընթացիկ քննությունների հանձնման և վերահանձնումների արդյունքները գրանցվում են միասնական ձևի տեղեկագրերում և հանձնվում համապատասխան ֆակուլտետի դեկանատ:

Ընթացիկ քննությունների արդյունքները ըստ բաժինների, ուսանողի ստուգման գրքույկում չեն գրանցվում:

Բոլոր այն կուրսերում, որտեղ չի գործում ուսանողների նպաստների նշանակման շրջափոխման (ռոտացիոն) կարգը, ընթացիկ քննությունների արդյունքներով ուսանողի գրական ամփոփիչ գնահատականը ընթացիկ քննությունների տեղեկագրից, ուսանողի համաձայնությամբ, փոխանցվում է հիմնական քննական տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ: Ընթացիկ քննություններից որևէ քննական առարկայից դրական («3 կամ 4») գնահատական ստացած ուսանողը իրավունք ունի, գնահատականը

բարձրացնելու նպատակով, նույն քննաշրջանում տվյալ առարկայի քննությունը հանձնելու կիսամյակային քննական գրաֆիկով: Նման դեպքում ընթացիկ քննության արդյունքը չի փոխանցվում հիմնական քննական տեղեկագրի մեջ, այն սահմանված կարգով կուտակվում է կիսամյակային քննության արդյունքների հիման վրա:

8. Հարգելի պատճառով ընթացիկ (միջանկյալ) քննություններին (ստուգումներին) չներկայացած ուսանողներին իրավունք է վերապահվում այն հանձնել և վերահանձնել մինչև տվյալ կիսամյակի տեսական ուսուցման վերջին շաբաթը, ըստ ամբիոններում սահմանված գրաֆիկի:

- Քննաշրջանից հետո դրական գնահատականի բարձրացման նպատակով քննության վերահանձնում չի թույլատրվում: Բացառիկ դեպքերում, երբ տեսական դասընթացը ավարտած ուսանողը հավակնում է գերազանցության դիպլոմի, դեկանի և պրոռեկտորի առաջարկությամբ, ռեկտորի թույլտվությամբ կարող է վերահանձնել 1-ից 2 առարկաների քննությունները դրական գնահատականը բարձրացնելու նպատակով վերջին կիսամյակային քննաշրջանի ավարտից մինչև գրաֆիկով սահմանված պետական որակավորման քննությունների սկիզբը:

9. Կիսամյակային քննաշրջանում 1-2 առարկաներից «2» (երկու) ստացած ուսանողը կարող է մարել ակադեմիական պարտքը (պարտքերը) գրաֆիկով սահմանված մարման շրջանում, որը հաջորդում է քննաշրջանին:

Առարկայական պարտքերի մարման վերջին ժամկետը սահմանվում է մինչև հաջորդ կիսամյակի սկզբի երկու շաբաթվա վերջը (եթե համալսարանի կողմից այդ առումով այլ որոշում չի կայացվել):

10. Ուսումնական պլանով սահմանված ստուգարքները, կուրսային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը, հաշվարկագրաֆիկական աշխատանքները, ուսումնական և արտադրական պրակտիկաների հաշվետվությունների պաշտպանությունը, ուսանողները պարտավոր են հանձնել մինչև կիսամյակային քննաշրջանի սկիզբը, ամբիոնի և (կամ) դեկանատի կողմից սահմանված գրաֆիկով:

Նույն կիսամյակում ստուգարքով և քննությամբ ավարտվող առարկաներից ուսանողի ստուգարքը համարվում է հանձնված, եթե ուսանողը սիստեմատիկ հաճախել է դասերին և լիարժեք կատարել բոլոր լաբորատոր-գործնական պարապմունքները:

Դեկանի հիմնավորված առաջարկության և ուսանողների կողմից սահմանված կարգով համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում, ուսանողը կարող է թույլատրվել կիսամյակային քննություններին 1-ից 2 ոչ քննական (տվյալ կիսամյակում) առարկաների ստուգարքային պարտքերի առկայության դեպքում: Այդ ստուգարքները

ուսանողը պարտավոր է հանձնել քննաշրջանում կամ առարկայական պարտքերի մարման ժամանակահատվածում:

11. Այն ուսանողները, ովքեր հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով (հիմնավորված փաստաթղթերով) սահմանված ժամկետներում չեն հանձնել ստուգարքները և քննությունները, ֆակուլտետի ղեկանը սահմանում է ստուգարքների և քննությունների հանձնման անհատական ժամանակացույց:

12. Ընթացիկ և կիսամյակային քննությունները անցկացվում են հարցատոմսերով (որպես կանոն երեք հարց): Ընթացիկ քննությունը անց է կացվում գրավոր կամ բանավոր (ամբիոնի որոշմամբ): Քննաշրջանում ուսանողների նպաստների նշանակման շրջափոխման (ռոտացիոն) կուրսերում առարկայական քննությունները կազմակերպվում են գրավոր, բացառիկ դեպքերում, կախված առարկայի բնույթից, ամբիոնի և ղեկանի ներկայացմամբ, համապատասխան հիմնավորման դեպքում՝ գրավոր, բանավորի լրացուցիչ զուգակցմամբ:

Առարկայական քննությունների հարցաշարը ամբիոնը ուսանողներին տրամադրում է կիսամյակի սկզբում՝ առաջին 10 օրում:

13. Առարկայական քննությունները ընդունում են դասախոսություն կարդացող և լաբորատոր-գործնական վարող դասախոսները, ամբիոնի վարիչի մասնակցությամբ: Շրջափոխման (ռոտացիոն) կուրսերում առարկայական քննությունների վերահսկմանը մասնակցում են նաև ֆակուլտետի ղեկանը (կամ տեղակալը), ռեկտորատի անդամը: Քննությունների վերահանձնման ժամանակ ամբիոնի վարիչի մասնակցությունը պարտադիր է:

Գրավոր քննությունների արդյունքները ամփոփվում և բաց քննարկվում են տվյալ կուրսի ուսանողների հետ, որից հետո գնահատականները փոխանցվում են քննական տեղեկագիր: Առարկայական քննությունների կազմակերպման, անկացման և գնահատման պատասխանատվությունը դրվում է տվյալ ամբիոնի վարիչի և քննող դասախոսի վրա:

14. Ստուգարքով ավարտվող առարկաներից ստուգարքը ընդունում են տվյալ դասընթացի դասախոսություն կարդացող դասախոսը և խմբի (ենթախմբի) լաբորատոր-գործնական (սեմինար) պարապմունքներ վարող դասախոսը, իսկ քննությամբ ավարտվող առարկայի ստուգարքը ընդունում է լաբորատոր-գործնական պարապմունքներ վարող դասախոսը, ամբիոնի վարիչի հսկողությամբ:

15. Քննաշրջանում ուսանողների գիտելիքները գնահատվում են «5-հինգ», «4-չորս», «3-երեք», «2-երկու» գնահատականներով: Մկսած 2007-2008 ուս. տարվանից նպաստների նշանակման շրջափոխման (ռոտացիոն) կուրսերում քննությունների արդյունքները գնահատվում են նաև 20 միավորային համակարգով, հետևյալ սանդղակով՝

1-7,0 միավոր -«2» (երկու)

8-13 միավոր - «3» (երեք)

14-17 միավոր - «4» (չորս)

18-20 միավոր - «5» (հինգ):

Շրջափոխման բոլոր կուրսերում քննական տեղեկագրերում միաժամանակ զրանցվում է գիտելիքների գնահատման միավորը և դրան համարժեք գնահատականը թվերով և տառերով (օրինակ-տեսական մեխանիկա-«17» - «4» (չորս), իսկ ուսանողի ստուգարքային գրքույկում՝ գնահատականը :

16. Քննաշրջանում քննության չներկայանալը քննական տեղեկագրում նշվում է «չի ներկայացել» բառերով: Եթե ուսանողը գրաֆիկով սահմանված քննությանը (ներին չի ներկայացել անհարգելի պատճառներով, ֆակուլտետի դեկանը, առաջադիմության զրանցման մատյանում նշանակում է «2» -երկու գնահատականը (0 միավոր):

17. Տվյալ կուրսի ուսումնական պլանով նախատեսված տեսական լաբորատոր-գործնական առաջադրանքները և ուսումնա-արտադրական պրակտիկաները, բոլոր քննությունները և ստուգարքները հաջող հանձնած ուսանողները, ֆակուլտետի դեկանի և պրոռեկտորի ներկայացմամբ, ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս, իսկ ավարտական կուրսերի ուսանողները թույլատրվում են պետական որակավորման քննության:

18. Կիսամյակի ուսումնական ծրագրերը չկատարած ուսանողները, քննաշրջանում երեք տարբեր առարկաներից, կամ նույն առարկայից երեք անգամ «2»-երկու ստացած, ինչպես նաև ստուգարքային առարկայից երեք անգամ «չստուգված» ստացած և սահմանված ժամկետներում առարկայական պարտքերը չմարած (անկախ պարտք առարկաների թվից և ստուգման ձևից) ֆակուլտետի դեկանի և պրոռեկտորի ներկայացմամբ, ռեկտորի հրամանով հեռացվում է համալսարանից, համաձայն սույն և ՀՀ ԿԳ նախարարության հաստատված կանոնակարգերի:

19. 2007-2008 թ. սեպտեմբերի 1-ից ուժը կորցրած ճանաչել 2002 թվականի նոյեմբերի 14-ի №2 նիստում հաստատված «Հայկական գյուղատնտեսական ակադեմիայում ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և ստուգարքների և քննությունների անցկացման կանոնակարգը»:

Հաստատված է

ՀՊԱՀ գիտական խորհրդում

2007 թ հուլիսի 16-ին

(արձ. թիվ 14 )